ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ՝ Ֆինանսական դեպարտամենտ, Ակտիվների, պարտավորությունների, կապիտալի կառավարման, կառավարչական հաշվետվությունների և ֆինանսական պլանավորման վարչություն

ՊԱՇՏՈՆԸ՝ Ակտիվների, պարտավորությունների, կապիտալի կառավարման բաժնի ղեկավար

- Արտոնությունների բարձր մրցակցային փաթեթ
- Հիմնական աշխատանք, աշխատանքն անմիջապես սկսելու և անորոշ ժամկետով աշխատելու հնարավորություն
- Մասնագիտական և աշխատանքային առաջխաղացման հնարավորություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարել Բանկի իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերը, կապիտալի համարժեքությունը, տոկոսային մարժան: Ապահովել անհրաժեշտ իրացվելիություն, իրացվելի միջոցների օպտիմալ տեղաբաշխում, ներգրավված միջոցների ծախսատարության բարելավում/կառավարում

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հաշվարկում և կառավարում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված պարտադիր պահուստավորման, իրացվելիության, համարժեքության և մյուս նորմատիվները, ինչպես նաև Բանկի ներքին սահմանաչափերը և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից սահմանված քովենանթները,
- Ներկայացնում է առաջարկություններ Բանկի իրացվելի միջոցների նկատմամբ պահանջի, ռեսուրսների ներգրավման և ազատ միջոցների տեղաբաշխման վերաբերյալ, իրականացնում է Բանկի ընթացիկ և ակնկալվող դրամական հոսքերի հաշվարկ և կանխատեսում,
- Իրականացնում է Բանկի դրամարկղերի, բանկոմատներում առկա մնացորդների մոնիտորինգ, կառավարում,
- Կառավարում է թղթակցային հաշիվները և միջբանկային պահանջ/պարտավորությունները,
- Իրականացնում է տոկոսադրույքի ռիսկերի մոնիտորինգ, սթրես թեսթեր, առաջարկություններ է ներկայացնում տոկոսադրույքի ռիսկի հեջավորման համար,
- Կազմում և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին է ներկայացնում նշված գործառնություններին վերաբերող որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծություններ և առաջարկություններ,
- Արձագանքում է ԿԲ կարգավորման դաշտում տեղի ունեցող փոփոխություններին
- Հանդես է գալիս Բանկի ներքին իրավական ակտերում բարեփոխումներ անելու առաջարկություններով, մասնակցում է ստորաբաժանման աշխատանքների հետ առնչվող իրավական ակտերի մշակմանը,
- Իրականացնում է վարչության ղեկավարի, ինչպես նաև Ֆինանսական տնօրենի և Գլխավոր տնօրենի կողմից տրված այլ լիազորություններ, կատարում այլ հանձնարարականներ,
- Առաջնորդում է թիմում ընդգրկված աշխատակիցներին, վերահսկում նրանց աշխատանքը, ավելացնում/զարգացնում նրանց մասնագիտական հմտությունները:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Բարձրագույն կրթություն ֆինանսական կամ հարակից ոլորտում
- Առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ բանկային համակարգում կամ ֆինանսավարկային կազմակերպություններում
- Հաղորդակցման և կազմակերպչական հմտություններ
- Վերլուծական մտածելակերպ
- Ծանրաբեռնված, լարված պայմաններում ուշադիր և զգոն աշխատելու, արագ կողմնորոշվելու ունակություն
- Ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն

- Թիմում աշխատելու ունակություն
- Կիրթ պահելաձև, աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունք և բարձր պատասխանատվություն
- Ժամանակի կառավարման զարգացած հմտություններ
- Աշխատանքը ճիշտ բաշխելու, օբյեկտիվ և անկողմնակալ որոշումներ ընդունելու ունակություն
- Հմտություններ և գիտելիքներ փոխանցելու, լիազորելու պատրաստակամություն և ունակություն
- MS Office, AS-Bank, Internet (ցանկալի է նաև Power BI-ի իմացություն և MS Excel-ի խորացված իմացություն)
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն, պարբերական վերապատրաստումների, որակավորման առկայություն, անընդհատ զարգանալու և աշխատանքի որակը բարելավելու ձգտում:

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ մրցակցային

«Ամերիաբանկ» ՓԲԸ աշխատակիցների համար սահմանված արտոնությունների փաթեթ, այդ թվում, բայց ոչ միայն՝ տարեկան պարգևավճար, ապահովագրական փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ, բազմաբնույթ վերապատրաստումներ, անհատական մասնագիտական զարգացման պլան և այլն:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

Աշխատատեղին դիմելու համար խնդրում ենք լրացնել դիմում-հայտը, կցել CV-ն և ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ **hr.fin@ameriabank.am**:

Նամակի վերնագրում խնդրում ենք նշել պաշտոնի անվանումը:

Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները:

Դիմումների ընդունման սկիզբը՝ 16.10

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 31.10